

ՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ԴՐԱՄ ԿԱՄ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂՂԱՆ ԱՌ

ՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ» ԲԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագրերն են չեն գործարկու
ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՍՏԱՆԱՆԻ ՊՐԻՆՏԵՐԻ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐԵ, ՈՂՁ

Գաղտնի համար վեցամսեայ 20
» » երամսեայ 12
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿԱՐ

Վեցամսեայ Ֆրանկ 7

ՌՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՂԿԱՍԻ ՀԱՄԱՐՑ

Վեցամսեայ Րուբլի 3

ԲԱՍՏԱՆԱՆԻ ՊՐԻՆՏԵՐԻ

ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ՏԱԹՔԸ

Խմբագրութեան վրայ է

ՆՈՐ ՕՐ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ

Պ. Ս. ՓՂՓՂԱՅԻՆԻ ստորագրութիւնը
չը կրող «ՆՈՐ ՕՐ»-ի ընկալարկները
անվաւեր կը նկատուին:

ԽՂՁԻ ԽԱՅԹՍ

Հաճոյքով և մեծ հետաքրքրու-
թեամբ կարդացի — ինծի հետ թե-
րևս շատեր ալ — Արթ. Տէր Եղնիկ
քահանայի պաշտօնական տեղեկա-
գիրք վերին-Եգիպտոսի Հայ գաղու-
թին վրայ, որ յստացաւոր հրա-
տարակուած տեսանք «Նոր-Օր»ի անց-
եալ շաբաթ օրան թիւին մէջ:

Բացասարար կրեմ. դարձանալի
և միևնոյն ասուն՝ գովելի չէք գտներ
արդարև տեսնել Եգիպտոսի անար-
գասանդ հողին վրայ՝ քահանայ մը,
որ գծարդգարար ոչ Մուշեղ վարդա-
պետ մ'է և ոչ Արմաշ վանքի աշ-
կերա մը, և որ յանդգնութիւնը կու-
նենայ, այս պահուս Առաջնորդարա-
նի կողմէ անհաշտ աչքով նայուած
թերթի մը յանձնելու իր մէկ պաշ-
տօնական գրութիւնը, թէպէտ վեր-
ջին ծայր շահեկան, բայց՝ ընդունուած
սովորութեան մը համեմատ՝ առաջնոր-
դարանի թուղթերու մէկ ծրարակոյտին
մէջ թաղուելու սահմանուած, ուրիշ
խել մը նուիրագործեալ soft/ամանե-
րու պէս, որոնք կրնային իրենց շա-
հեկանութիւնը ունենալ հանրութեան
քով, եթէ ի պահանջել հարկին հրա-
տարակութեան տրուէին, ինչպէս պի-
տի ընէ Ալեքսանդրիոյ Առաջնորդա-
րանի Պատ. Վարչութիւնը:

Տէր Եղնիկ քահանայ արժանի է
ուրեմն մեր շնորհատրութեան. Հա-
ճոյքը զոր մեզի պատճառեց իր այդ
գրութեամբ՝ կրնայ գրգիռ ըլլալ իրեն,
ուսելին ընել և՛ կամայ կամայ՝ հը-
րապարակագիր մը դառնալու, յա-
ճախ բարոյախօս յօդուածներ հրա-
պարակ նետելով, քիչ մը ոչ-գրա-
բարեան ու նոր սերունդի ոճով, եթէ
կուզէ իսկապէս օգտակար ըլլալ առ-
հասարակ ամենուն ալ, ուսեալին թէ
անուսին:

Փափաքելի է որ Տէր Եղնիկ՝ իր

պաշտօնական տեղեկագրութեանը մէջ
նախանձախնդիր հեռուողներ ունենար:
Վերին-Եգիպտոսէն անդին՝ կայ
նաև վարին-Եգիպտոս մ'ալ, որուն
բաղդատամբ բաղդատար ու երանելի
այցելու հովին է Տէր Մամբրէ քա-
հանայ, որ գծարդգարար մինչև այս-
օր գրաւոր բան մը ներկայացուցած
չունի իր այցելուի սպաւորութիւննե-
րէն, եթէ չենք սխալիք՝ ոչ Ս. Առաջ-
նորդին և ոչ ալ մամուլին, ինչպէս
տարօրինակօրէն ըրած էր Պոլա-
կան թերթի մը մէջ՝ «Շէյխ-Իլ-Էթ-
ման»-ի խնդրոյ մասին, իր տեղապահ-
առաջնորդական վարկը վստահուած
տեսնելով:

Գիտենք սակայն թէ՛ Արթ. Տէր
Մամբրէ քահանայ, հակառակ իր
անցեալին մէջ վայելած հեշտօրօր
սխալութիւն. ուսեալ կամ ցրիչ չարժող
եկեղեցական մը չէ, և չենք մեղադ-
րելը զինք. ասի թէպէտ արդեւք մը
չէ, որ գէթ մէկ անգամ մենք ալ
գիտնայինք թէ ինչ կը խորհի վա-
րին-Եգիպտոսի գաղութին վրայ, և
թէ ինչ կարելի է ընել անոր համար:

Թողով որ ինչ աւելի կրօնասէր և
կամ՝ աւելի կրօնական խնդիրներ շօ-
շափելու իրաւասութիւն ունեցող (sic)
հրապարակագիրներ թիկնածու ըլլան
Տէր Եղնիկ քահանայի կրօնասիրական
առաջարկներու իրագործման, ես ալ,
իմ կողմանէ, գեղջական թէ անպա-
տի մեծակեաց կեանքէն փորձուած ու
չարչրուած մէկ մը, զուտ ազգային
տեսակէտով գերազանցօրէն օգտակար
կը գտնեմ Տէր Եղնիկի մանկավար-
ժական ծագկոց մ'ունենալու պահան-
ջը Ասիական մէջ, որ գիւղերու ամե-
նէն աւելի հայաշատ գաղութն է,
ինչպէս երբեմն քահանայի մը այցե-
լութիւնը ուրիշ տեղեր, Մինիա, Էս-
նա, Ասուան կային:

Տեստեսական խնդիրը կայ սա-
կայն, միշտ ազնիւ գաղափարներու
գէ՛մ խոչնդոտ ցցուող, որը թէպէտ
գարմանել անկարելի բան մը չէ, եթէ
ի նկատ առնենք որ՝ շրջակայ գիւղե-
րը ազգայիններ սնինք, ազնիւ և հայ-
րենասէր, որոնք սիրայօժար յանձն
պիտի առնէին տարեկան մասնաւոր
տուրք մը վճարել մատուօր և վար-
ժարանի մը անհրաժեշտ ծախսերուն
համար:

Օ՛հ, գիւղերու, անպահանջու խա-
ղաղիկ բայց տխուր մթնալորտներու
տակ է, որ կը վարժուիս աւելի ազ-
գասէր ըլլալ: Մայրաքաղաքի կեդ-
րոնավայրերուն մէջ զիրար կատենք,
զիրար կը բզկտենք, հոն տեղ՝ պէտ-
քը կըզգաս հայրենակիցներու, կարօ-
տը կը բաշես մարտիրոս հայրենի-
քիդ: Ժամեր, վարկեաններ կուզան,
ուր հոգուդ բոլոր ուժովը կանխես
անպիտան մամուլն, որուն սիրոյն
զոհած ես ամեն բան:

Տէր Եղնիկ Հայր մոռցած է միայն
կէս մը: Այցելութիւն մ'ալ, ի սէր
Աստուծոյ, մեր Սուտանի հայրենա-
կիցներուն, որոնք մեզի տալին հայ-
րենասիրութեան է՛ն փայլուն և օրի-
նակելի ապացոյցը. փոխադարձ պար-
տականութիւն մ'ունինք կատարելու
անոնց հանդէպ. ինչպէս կը տեսնուի
«Նոր-Օր»-ի այսօրուան ազգային բաժ-
նին մէջ:

Եթէ ուրեմն ուժ տանք մեր հե-
ռաքնակ գծարդգարայիններու հայրե-
րենասիրութեան, վառ ու կանգուն
պահենք անոնց ազգասիրական ոգին՝
անոնց բարոյական ու մտաւորական
պահանջներուն դարման հասցնելով,
ուղղակի թէ անուղղակի նպաստած
պիտի ըլլանք ազգին շահերուն, այ-
սինքն՝ հեռուները գտնուողներու տոհ-
մային բարքերու սնխախտ պահպան-
ման, մայրենի լեզուի անմոռացու-
թեան, գաղթողներու յարաճուն բազ-
մապատկութեան, վաճառականու-
թեան ծաւալման. կային:

Կուզէք, սիրելի ընթերցողներ, ա-
ւելի շօշափելի փաստերով գիտնալ
հայութենէ զրկուած գեղջական կեան-
քի անպատեհութիւնները և քահանայի
մը այցելութիւնէն սպասուած օգուտ-
ները, ազգային թէ կրօնական կրկնա-
կի տեսակէտներով:

Մնեալ տարի Հոկտեմբեր ամիսն
էր: Որբասիրական համեստ ձեռնար-
կըս ծանօթ է կարծեմ ազնիւ ընթեր-
ցողներուն, որոնց ամենուն համար
կը մտղթեմ որ՝ ամէն բանէ առաջ՝
առողջ և անկախ գործի տէր ըլլան:

Ամէն մ'ի վեր վառուած էի սուգը
իզճի մը լափլիզող կրակովը, գիշեր-
ուան քունս խանգարելու աստիճան:
Վատի-Հալֆա գտած հանգանակու-
թեան յաջողութենէս խրախուսուած:

Կուզեմ մինչև խարթում՝ ճանբորդու-
թիւն մ'ընել սրբերու ի նպաստ սղոր-
մութիւն մուրալու համար, ամեն բան
աչքիս առած: Գա՛ն յուսախարու-
թիւն: Վերէն արձկուած պաշտօնա-
կան յանկարծաստ հրաման մը Գա-
հրէ վերադարձս կը պահանջէ, բարձ-
րաթուիչ ազահ ծրագիրներս տակնու-
վրայ ընելով: Նաւուն մէջն եմ.
ոչ բարեկամներուս՝ վերադարձիս առ-
թիւ ցաւակցութեան ազնիւ արտա-
յայտութիւնը, լալահառաչ մար մը
կրկին սղջագուրելու և ոչ ալ լսարան
-Ընթերցատան շուրջը վերադառնա-
լու թեթև ուրախութիւնս անկարող
կըլլան մեղմացնել տխրութիւնը զոր
կըզգամ, հանգանակութեան արդիւն-
քը գոհացուցած չըլլալով անզուսպ
փափաքս:

Յուսասիրութեանս իբր՝ փոխա-
րինում, քանի մ'օրուան արձակուր-
դէ օգտուած՝ կը սիրեմ պտոյտ մ'ը-
նել վերին-Եգիպտոսի կողմերը: Ե-
րբ օր Ասուան ու Շէյխլ կանցնեմ,
ուր տեղ շատ քիչ Հայեր կան: Շէյ-
լալ վերին-Եգիպտոսի ամենակարևոր
նաւահանգիստն է և երկաթուղոյ գը-
ծին Railhead ը, որուն կայարանի
ճիշտ դիմացն է Ֆիլիպ կղզին, իր պատ-
մական հնութիւններովը նշանաւոր,
որոնց վրայ աստեղով Տր. Յակոբեան
գրած է արդէն «Փարոս»-ի մէջ:

Երկար ատեն շրջագայիլէ վերջ այս
հնութիւններուն շուրջը, սրոնց տես-
քը միտքը կառաջնորդէ գէպ ի խա-
ւարի հին դարերը, մակոյկ մը կը
վարձեմ ու կէս ժամ վերջ reservoir
կը հասնինք: Երկու տարի առաջ ա-
մայի բլուրներով միայն շղթայուած
վայր մը, որ հիմա ռումանիոյ աւա-
նի մը գեղեցկատեսիլ երեւոյթը ա-
ռած է իր միայրակ և երկններանգ
չէնքերով: Ապշած՝ չորս կողմն կը
նայիմ, Հայեր կը փնտռեմ, ու միայն
անծանօթ օտարներ, Յոյներու և իտա-
լացիներու խանութներ կը գտնեմ ալ
ու ձախ: Մարդկային ահագին բա-
նակ մ'է որ կուուելու ելած է բնու-
թեան գէ՛մ. երկու տարի առաջ 3,000ի
մտ հոգիներ կաշխատէին ջրամբարի
շինութեան համար, ու դեռ հարիւր-
ներով կրանիթ բար տաշող Մալթէզ-
ներ կը տեսնուին, որոնց հազուստն
ու կարմիր փողկապը երկակայիլ պի-
տի տային քեզ աշխարհի ամենէն
ճիւղ անիշխանականները:

Ուրախութիւնն չափ չունի՝ իմանալով որ ջրամբարի գործակալութեան պաշտօնատան մէջ կը գտնուի Հայ մը, բարեկամ մը, որուն հետ սեւակցելէ վերջ՝ կտուա՞նորդութիւն միակ Հայ ընտանիքի մը տունը։ Իզմիւրցի մը տանտիրէնը, բարեկիրթ ու տիրպար հայուհի, որ իրական սեռին յատուկ հիւրասիրութեամբ և մեծանակեցիմբար մտածողութեամբ կը հասկնայ ու ըլլալ և ինչ պատճառներով հոն զբարեկիրթ խօսակցութիւններ քիչ մ'աւելն նիւթի վրայ։ Տիկինը ամուսնացած է հայասէր Սուրբաբի մը հետ, Հաննա ճէտօս անուամբ շոգեկառքի մեքենավար մը։

Տիկին ճէտօս կը դժգոհի մինակեցութենէն, գրացիները օտարներ են միայն որոնցմէ շատ չախորժիր. արձաքներ ունի, ու վարժարան չկայ անոնց Հայերէն սովորեցնել տալու համար. տանտանայ մանկիկ ունի, մկրտել կուզէ՝ ոչ եկեղեցի կայ և ոչ ալ քահանայ։

— Դիմացնիս զանգակատուն մը կը տեսնեմ. եկեղեցի չէ՛ այն, սիրելի Տիկին. կը հարցնեմ իրեն։

— Քաթօլիքներուն համար է ան, ազնիւ Պարոն։

— Ինչ կըլլայ եթէ . . . և կամ դուք իսկ Յովհաննէս Մկրտչունի մ'ըլլար։

— Ես Հայ եմ և կուզեմ որ զատակներս Հայու ձեռքով մկրտուին։ Չեմ գիտեր թէ ինչպէ՛ս կրնամ Մկրտչունի ըլլալ ես . . .

— Երեւի և աստուածահաճոյ բան մ'իջ այս, Տիկին, մի վախար բնաւ, բայց երբ Գահիրէ հասնեմ՝ կը խոստանամ հրապարակաւ պահանջել որ Հայ քահանայ մը անգամ մը այցելութեան գալ հոս։

Ու հրաժեշտ տալով մեկնեցայ։

Երևակայեցէք անգամ մը վտանգը, եթէ այդ բարի ու տիրպար Հայուհին թիչ մը թեթեւամտ և օտարամուկ եղած ըլլար. ինքը և իր զեռաստի զակները՝ ուչ կամ կանուխ՝ կորսուած պէտքէ համարուէին հայութեան համար։

Չը գիտեմ թէ իր օրհնեալ մանկիկը մկրտուցեալ ցարդ թէ ոչ. բայց երբ Տէր Եղիշիկ Հօր գրութիւնը կարգացի՝ խղճի խայթ մը զգացի՝ խոստանազանց զանուած ըլլալու համար։

Ու անհուն գոհունակութիւն մը կունենամ, այսօր, հազարամէկ զբաղումներու մէջ՝ հեռագրական մեքենային վրայէն քահանայի մը զովելի ստաշարկին արձագանք հանդիսանալով ու ցոյց տալով այդ ազնուաբարոյ ու տոհմասէր տիկնոջ, թէ ապերախ անծանօթի մ'առջև չէր որ բացած էր իր հիւրամեծար յարկին հայու դուռը։

Մնացեալը կը թողում Աստուծոյ, Ս.Առաջնորդին և Տէր Եղիշիկ բարի քահանային։

Ս. Օ.

ՅԱՆՎԱՐԿԱՅ շարժ օրուան թիւով պիտի հրատարակենք «Կիւրաք» Սպանդանոց յի շարունակութիւնը։

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՉԱՐԱՆԻ ՅՈՒՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Տիար Ներկայացուցիչ

«Նոր-Օր» լրագրի

Ինչպէս որ Ձեր Պատ. Թերթին մէջ յայտարարեցիք թէ Պերպերեան Վարժարանի 25 ամեայ յիշելանի աւթիւ տեղւոյ մէջ Յանձնաժողով մը կազմուած է հաւաքելու համար կըրթառէր աղքայնոց նուէրներն, Յանձնաժողովս ալ ներկայիս կը յայանէ թէ արդէն սկսած է իւր այդ նուիրական աշխատութեան և թէպէտ՝ որոշած է, կանխաւ, շրջաբերակնով մը դիմել բոլոր աղքայնոց և հրաէք կարգաւ մասնակցելու համար այդ նուիրատուութեան, միայն թէ որպէսզի տեղացի ազնւ և հասարակութիւնն քաջ համազօրի և դիմացի թէ այդ նուիրատուութիւնն պիտի ըլլայ այնպիսի անձնաւորութեան մը համար որ կատարելապէս արժանի է ամեն համակրանաց և քաջալերանաց և թէ Աղքէն կրտստագիտութեան պարտք մը ունի առ այն, կը խնդրէ մասնաւորապէս որ հաճիք, ներկայիս հետ, Ձեր Պատ. Թերթին մէջ հրատարակել Օրմանեան Սըրբազան Պատրիարքի կնիքակը որ՝ արդէն հրատարակուած է Պերպերեան Թերթիւն մէջ և որ այնքան յատուկ և լաւ կերպով ի վեր հանած է Ռէթէս Էֆ. Պերպերեանի բարձր արժանիքը։

Ներկայիս հետ կ'ստանաք նաև յիշեալ կնիքակներէն օրինակ մը։

Ընդունեցէք, Տիար Ներկայացուցիչ, մեր խորին յարգանաց հաստատին։

Ի դիմաց Յանձնաժողովոյ Ատենադպիր Ատենապետ Յ. ՍԵԹԵԱՆ Զ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

12 Յուլիս 1901, Գահիրէ

ՄԱՂԱՔԻԱ ԻՍՈՒՍԻ ԹԻՍՈՒՍԻ ԲԷՐԻՍՏՈՍԻ, ողորմութեամբն Աստուծոյ Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ եւ Պատրիարք Հայոց Թորոֆոյ, Սիրեցեալ որդւոց մերոց, սուսմեատէր և կըրթատէր աղքայնոց ի Մոյրաբարաբիս և ի դաւառս և արտաբոյ, ողջոյն եւ սէր և օրհնութիւն աստուածային։

Քսանէհինգամեակ մը կը բոլորի ի մօտոյ, սկիւնով 1876 Հոկտեմբեր 1 թուականէն, յորում Արժանապարհ և Արքեպիսկոպոս Ուսումնական և Ուսուցիչ Ռեթէս Պերպերեան օրինաւոր արտօնութեամբ ձեռնարկեց ազգային ուսումնարան մը բանալ Հայագի մանկընտան առջև։ Պերպերեան վարժարանը անընդհատ շարունակեց անտի և այսօր միջնակարգ կամ երկրորդակարգ կոչուած վարժարանաց գրադիտական և լեզուագիտական և գիտական ամբողջ ծրագրով, վկայեալ շրջանաւարտներ ընծայեց հարիւրեակ ու կէս, կըրթութիւն առած աշակերտներ հանց իր բերեց հարիւրեակ, ուսմանց ճաշակը տուա շատ ևս պատանիներու, առողջ սկզբունքներ ներշնչեց իւր պատարակելոց, ուղիւ բարոյականով զարգացոյց իւր աշակերտները, կենցաղական ասպարեզին համար կըրթեց իւր սաները, օգտակար անհատներ պատրաստեց ամեն գասակարգէ, Աղքին պիտանի Եկեղեցւոյն սիրելի և Տէրութեան հաստատութիւն զատակներ, պատուուցաւ իւր աշակերտաց վկայեալ պատուաւորութեամբ, վարձատրուցաւ հանրութեան անկեղծ գոհունակութեամբ։

Պերպերեան վարժարանի հիմնադիր ու վարիչ և ուսուցչապետը այդ ամենը կատարեց անձնական ջանից և անհատական աշխատութեան և գերազանց ճիգերու շնորհիւ, ինքն իրեն հովանաւոր, ինքն իրեն պաշտպան, իւր գործութիւնն եղաւ իւր ուղիւ և անկեղծ և փութաշուն և տոնուն և արգիւնաւոր գործունէութիւնը, որով համակրութիւն և վստահութիւն գրաւեց, և ամեն կողմէ և ամեն գասակարգէ աշակերտներ ունեցաւ։

Մեր Աղքին մէջ լաւ ձեռնարկներ յաճախ երեցած են, այլ յաջողութիւններ և տեւողութիւններ ցանցառ, որով իւր ստեղծելի մէջ նշանաւոր կը ներկայանայ բոսն և հինգ տարի միշտ զարգացուն ընթացքով շարունակուած վարժարան մը, որ չունի մեծագումար կտակներու նախանձելի և անվերական յինարանը։

Այլ երևոյթն է զոր երախտապարտ ըզգացմամբ և գեղեցիկ խորհրով փափարեցաւ յիշատակել Պերպերեան Սանուց ընտիր խումբ մը, և իւր այլ խորհուրդը անաշարկեց մեզ, որ և Աղքային Վարչութեան և մեր ալ տեսութեամբ իրաւացի և գովանի պատուեցաւ։ Ռեթէս Պերպերեան Էֆէնտին իւր վարժարանին վրայ ցոյց տուած արգիւնքներն զուրա ալ, բոլորին յարգն ու համակրանքը գրաւած է իւր ուսուցչական աշխատութեամբ, գրագիտական տաղանդով, իմաստասիրական հրատարակութիւններով, ընտիր երկասիրութիւններով, Ուսումնական խորհրդոյ երկարատե պաշտօնավարութեամբ, վարչական պաշտօններու մասնակցութեամբ և ազգային գաստարակութեան կանոնաւորման և զարգացման տուած կազմակերպութեամբ։

Յատուկ Մանասխումբ մը՝ Պերպերեան ազնիւ Սաներէ կազմուած, մեր նախագահութեամբ ձեռնարկած է կարգադրել քսանհինգամեակին լրմոն փաջերէ յիշատակութիւնը առաջիկայ Հոկտեմբերի ըսկիցը։ Անոր պիտաւոր դիտումն է այնպիսի ցոյցեր ընծայել բազմաշխատ Անձին, որ իւր արգիւնքները ընդարձակելու և ասպարեզով միջոցներ ընձեռել նմին, որք ստուգի անոր աչքին ամենն ընտիր նուէրը և անոր սրբտին ամենն մօտ բնման կը կազմեն։ Իսկ իրտարի վարժարանը, որ այդչափ տարիներէ հետ Պերպերեան Հիմնադրին գործունէութեան ասպարեզը և նուիրական վայրը եղած է, վարձու ընտիրութիւնն սեփական ստացութիւն եղաւ, այլ շինածը հին է և անձուկ, և անոր նորագութիւնն ու ընդարձակութիւնը պիտի տան անշուշտ Պերպերեան ձեռնարկութիւն նորագեալ և ընդարձակեալ կեանք մը, և իբր անմիջական հետեւանք՝ տեղութեան և ասպարեզութեան և բաշխարարութիւն, և ասոր ալ արգիւնք՝ Աղքին և ազգային մանկուոյն զգալի և անուրանալի օգուտ։

Կը հրաւիրուին ուրեմն Պերպերեան վարժարանի երախտաւորեալ սաներ, Պերպերեան հաստատութեան շնորհապարտ ծնողներ, և Պերպերեանի արժանեաց զնահատող ազգայիններ, այդ կերպով և այդ նպատակով արտայայտել իրենց զգացումները, հաստատել իրենց իրձերը և քաջալերել արգիւնաւոր գործիչ մը։ Սոյրական եղող զանազան առարկաներու ընծայարեութեան կը նախագասուի այս անգամ ազգային զբաղման ընծայել ընդարձակեալ ազգագուտ հաստատութիւն մը և ասպարեզի կարեւոր ձեռնարկ մը և ցուցնել թէ Աղքը գիտէ պատուել արժանաւոր անհատներ, գիտէ քաջալերել արժանաւոր ձեռնարկներ, գիտէ ասպարեզի արձանաւոր հաստատութիւններ և բարեոյն ու օգտակարին ընծայել իւր նպատան ու ձե-

ղորտութիւնը։ Մենք ալ պատրաստ ենք միջնորդ լինել և հոկիւ այսպիսի գեղեցիկ նպատակի մը իրականացում, ասանալ և հասցնել բոլոր բարեւեր ազգայնոց նպատանը, որք պէտք է օր առաջ հաւաքուին, որպէս զի հնար լինի մտադրեալ նորագութեանց ու ընդարձակութեանց ձեռք գարեւել և ժամանակին հասցնել որոշեալ միակ ու մեծ նուէրը, որ իւր նշանակութեամբ և արգիւնաւորութեամբ յարմարագոյն և տեղագոյն կըրթուր պիտի ըլլայ Ռեթէս Պերպերեանի պատուոյն։

Վստահ ենք որ ճշմարիտ արգեանց հանգեպ արտայայտող երախտապարտ և զբնահատող զգացումներ, իրենց պայծառ և իրական նշանը պիտի ունենան։ Կ'օրհնեմք սրատուգի մաղթանօք Պերպերեան վարժարանի հաստատութիւնը, բազմարկուն հիմնադիրը, բազմաշխատ ուսուցիչները, նախկին սաները, այժմեան աշակերտները, անոնց պարագաները, բարեւեր նուիրատուները, և բոլոր բարեացակամ օժանդակողները. կ'օրհնեմք և կը մաղթեմք որ անասան մեան օգտակար հաստատութիւններ, կ'օրհնեմք և կը մաղթեմք որ շանան և զարգանան ազգային կըրթարաններ, վայելելով մեր Օգոստոսիայ և Վեհապանծ Կայսեր Բարձր պաշտպանութիւնը, վայելելով բովանդակ Աղքին համակրութիւնը և ձեռնուորութիւնը, վայելելով Բարձրեւոյն Աստուծոյ Երկնային խնամոց անպատ զանձերը։

Ողջ յիմնը մաղթեմք Ձեզ ամենեւցուն, Արդեակի սիրեցեալք եւ օրհնեալք ի Տէստեմէ։

ՊԱՏՐԱՐԷ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՄԱՂԱՔԻԱ ԱՐԵՅԿՈՍԿՈՊՈՍ

Տուա ի Պատրիարքանէս յամին 1901 յ12 Մարտի ընդ 182 համարաւ կըրթակաց։

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՂ ԻԶՄԻՐԵԱՆ ՍՐԲԱՉԱՆԻ ՕՐՈՎ

Ե.

Եգիպտոսի հայոց Առաջնորդ Գեորգիւնեան Մատթէոս Սրբազան հետեալ երկրորդ անգիւղազիրը մաստայած է Աղք. Կեղր. Վարչութեան ի մասին իւր թեմին աղպային դործոց։

Ամեն Ս. Պատրիարք Հայր, Նախագահ պատկանելի Խոսն Ժողովոյ Աղք. Կեղր. Վարչութեան։

Սրբազան Տէր.

Ձեր Բարձր Սրբազանութիւն և Աղք. պատկանելի Վարչութիւն կը յիշէր անշուշտ Եգիպտոսի թեմին առաջնորդական պաշտօնաւարարութեան միասնաց Տեղեկագրոյն սա պարբերութեան թէ «Գահիրէ ազգային գործոց վիճակին առիճանաբար բարեօրման հետ, այլ ազգային բարձրագոյն շահոց վերարեւել կարեւոր խնդիրներ լուծման և կարգադրութեան մէջ կը գտնուին այսօր՝ զարձեալ շնորհիւ և աշխատութեամբ Ն. Վսեմութեան թապալտ փաշային». կը փութամ արգ պարզել զայն պարբերութիւն։

Մնած թէ արգէն Եգիպտոսի ազգային գաղթականներէն բնիկ վսեմից հանգուցեալ Գալստեան Կարապետ աղալի կտակը, Բարեկիշտակ կարապետ աղա Գալստեան նախապէս ի Գահիրէ ազգային գեանի մը վրայ կատուցած է Խորենեան ազգային երկսեռ վարժարանն և ապա կտակաւ ազգին թողած է երեք ազարակներ. 1. Տէկէզի կըրթն մէջ 400 արտավար, 2. Եկեղ-Էթ-

մտն գիւղին մէջ 340 արտավար մէկ ա-
գարակի՝ մէջն եղած տնով և 6,000 ար-
մախի ծառերով էն. 3. Ազիզիյէ գիւղի
մէջ 60 արտավար մէկ ագարակ: Այս ե-
րեք ագարակաց առաջնոյն հասոյթն ուղ-
ղակի նոյն վարժարանին ծախոց՝ իսկ
միւս երկու ագարակաց հասոյթն յիշեալ
վարժարանին, միանգամայն և այլապէս
յատկացուցած է:

Նոյնպէս յԱղեքաանդրիա Մահմուտիյէ
կոչուած արհեստական գետակին եղերաց
վրայ եղած երկու տուն հանդերձ իրենց պար-
տէզներով թողած է ազգին, Աղեքաանդրիոյ
մէջ եկեղեցոյ մը կառուցման (որ արդէն
կառուցեալ է) կամ ազգական վարժարանի
մը շինութեան յատկացուելու համար, սա
պայմաններով որ Շէյխ-Էթմանի և Ազիզի-
յէի երկու ագարակաց և Մահմուտիյէի եզե-
րաց վրայ եղած երկու տանց հասոյթն իւր
կողակիցը՝ Տիկին Արուս Կ. Գալստեան ըն-
դունի քանի որ ողջ է կամ չէ ամուսնա-
ցած վերտան. իսկ Տէչեի ագարակին հա-
սոյթն իւր մահուանէ անմիջապէս յետոյ
յատկանալ խորհրդանի վարժարանի ծախոց,
և ունի հինգ կտոր կայուածոց ինժեներնե-
րն ազգին անուան դասնա:

Թէպէտև հոգեւոյս կտակարարին մահ-
ուանէն, որ տեղի ունեցած է յ8 Ապրիլի
1864, անմիջապէս յետոյ ըստ կտակին
Տէչեի ագարակին հասոյթը խորհրդանի վար-
ժարանին յատկացած է, այլ սակայն ան-
տի և այս անի քան քանակներու տարի-
ժամանակ զեռ ևս նոյն կտակեալ կայուա-
ծոց ինժեներնեքն հոգեւոյս կտակարարին
անուան վրայ կը գտնուէին, որ կրնար վը-
նասակար հետևանաց յանդի:

Անցեալ 1886—1887 Ազգային վար-
չական շրջանին վերջին ամսոց մէջ սոյն
այս կտակեալ կայուածոց ազգին անուան
գործուելու համար ձեռնարկներ եղան. և արդ
որակ եմ բնուել որ նոյն հինգ կտոր կալ-
ուածներու ինժեներնեքն ազգին անուան
գործած և կտակարարութեան պաշտօնական
տուժարոց մէջ արձանագրուած են շնորհիւ
և մասնաւոր աշխատութեամբ Ն. Վսեմու-
թեան Թագուր փաշայի. ահաւասիկ Ն. Վսե-
մութեան առ իս ուղղած Յուլիս 28/9
Օգոստոս 1887 թուական տեղեկագրոյն՝
այս և Գահիրէի ազգային սնտուկին ունե-
ցած սովորաւոր պարտոց մնացած մասին
(այդ ի մտոյ հաստցուելն յիշած էի արդէն
նախորդ Տեղեկագրոյս մէջ) հաստցման խընդ-
րոց վերաբերեալ պարբերութեանց պատճենն.

«1. Հանգուցեալ կարապետ Աղա Գա-
լստեանի կտակն արձանագրուեցաւ Աղեք-
աանդրիոյ, Գահիրէի և Միւսիլիյէթներու
դատարաններն (մէհքեմէներն), որ մինչև հի-
մայ չէ եղած ազգային կտակ մը որ Մէհ-
քեմէն արձանագրուի»:

«2. Շէյխ-Էթման, Ազիզիյէ և Տէչեի
էպատիքներուն ինժեներնեքն ազգին անուան
գործած և միւսիլիյէթի թէքլիֆ տետրակին
մէջ արձանագրուեցան»:

«3. Աղեքաանդրիա գետեղերն եղած
երկու տանց ինժեներնեքն ազգին անուան
գործած, միւսոյն ինժեներնեքն վրան քանի
մը խօսք աւելցուցելով մէհքեմէի գատրէն
ստորագրեալ և սինիի մէջ արձանագրեալ»:

«Ահաւասիկ, Սրբազան Հայր, ասոնք
Ձեր փափաքին համեմատ կատարուած են
մեր միջնորդութեամբ, ինչպէս որ Ձեր Գե-
րապատութեան խոստացած էի»:

«Նոյնպէս Պոլիս գտնուող Սրմաքէշի
պարաքը, 40,406 դրոշ, քանի մ'որ յա-
ռաջ ամբողջ վճարուեցաւ. ասանկով դուր-
սը մէկ պարաք մը չէ մնացած. կը մնայ

այլմ Ս. Եկեղեցոյ նորոգութիւնն, որ կը
յուսամ Ձեր Սրբազնութեան վերապարձին
անոր ալ հոգ կը տարուի»:

«Կը խնդրեմ որ սոյն գրոյս պարունա-
կութիւնն հաղորդէր Ամեն Ս. Պատրիարք
Հօր, մասնաւորապէս մեր խոնարհ յար-
գանքները մատուցանելով Ն. Ամեն Սրբազ-
նութեան, վստահացնէր զինքն որ սոյն
բազմամայ խնդիր վերջապէս ըստ օրինի
լուծուած է»:

(Պատրագրութիւն)

«ԹԱԳԻՈՐ ՅԱՆՈՎԱԲԵԱՆ»

Այսպէս ահա, Սրբազան Տէր, բարիչի-
շատակ կարապետ Աղա Գալստեանի կտա-
կին ազգին վերաբերեալ մասը 22 տարի-
ներէ աւելի ժամանակ երեսի վրայ մնալէ
յետոյ ըստ կամաց կտակարարին գործա-
դրուած է ըստ օրինի, և Ազգն այսօր բա-
ցարձակ տէր է նոյն կտակեալ երեք ագա-
րակներու և երջու տանց:

Հարկ կը համարեմ հաղորդել նաև Ձեր
բարձր Սրբազնութեան և Ազգային պատկա-
ռելի վարչութեան որ հոգեւոյս կարապետ
Աղա Գալստեանի ամուսին՝ Տիկին Արուս
Կ, Գալստեան՝ Յուլիս 11/23 շարաթ գի-
շեր վախճանած է. ուստի և յետ այսօրիկ
ըստ կամաց կտակարարին՝ Շէյխ-Էթման և
Ազիզիյէ ագարակներուն վարձքը Գահիրէի
ազգային սնտուկին և Մահմուտիյէի եզերաց
վրայ եղած երկու տուններուն վարձքը Ա-
ղեքաանդրիոյ Ս. Եկեղեցոյ սնտուկին կը
պատկանի:

Թէպէտև վստահ որ Ձեր բարձր Սըր-
բազնութիւն և Ազգային Պատկառելի վար-
չութիւն զիտէ բաշ գնահատել և բաշխելով
ազգասիրական ծառայութիւններն ու ջան-
քերը, և սակայն կը ներուի ինձ անշուշտ
որ կրնայ յառաջ զսոյն տեղեկագիր հա-
մարձակութիւն ունենամ Ձեր բարձր Սըր-
բազնութեան և Պատկառելի վարչութեան
խորին ուշադրութեան յանձնելու Նորին վը-
սեմութեան Թագուր փաշայի Գահիրէի ազ-
գային գործոց վիճակին բարեբան նկատ-
մամբ տարած բուն ջանքն ու աշխատու-
թիւնն, իւր անձնուիրութիւնն ու զոհողու-
թիւնն, ի մի բան գործելն իւր ապաքէն բազ-
մազաղ վիճակին մէջ:

Յուսալից եմ, Սրբազան Տէր, վստահ
լինի թող և Ձեր բարձր Սրբազնութիւն,
որ շնորհիւ Նորին Վսեմութեան՝ Գահիրէի
ազգային գործերն ևս խիստ մտաւոր ա-
պագայի մը մէջ նախանձելի վիճակ մը պի-
տի ունենան:

Մնամ աղօթակից
Առաջնորդ Հայոց Եպիսկոպոսի
ՄԱՏԹՆՈՍ ԵՊԻՍԿՍ. ԻՅՄԻՐԱԿԱՆ

Գերապատիւ

Սրբազան Եղբայր ի Բրիտոսս.

Ազգ. կեդրոնական վարչութեան խոնոն
Ժողովը գոհութեամբ լսեց որ Ձեր Գերա-
պատութիւնը մեր վերջին հրաւիրանաց վը-
րայ՝ յօժարած է վերաստանել Եզիպտոսի
առաջնորդական պաշտօնը՝ զոր արժանապէս
վարելով ցարդ՝ ըստ իւր ծանուցեալ ձեռն-
հասութեան՝ կրցած էր այնքան յարգիւնս
ածել: Ազգային վարչութեան ուշադրութե-
նէն չէին վրիպած նաև այն անպատշաճ
ցոյցերն, որք այս վերջին ժամանակներս
քանի մ'անձանց կողմէ տեղի ունեցած էին
յեզիպտոս, հակառակ օրինաւորութեան և
կամաց ողջմիտ ժողովրդեան վիճակին, որ
գո՛հ Ձեր բարեոք պաշտօնավարութիւնէ՛ն կը
ցանկայ ըստ առաջնոյն վայելել Ձեր հով-
ուական խնամքն. ուստի խոնոն Ժողովը
գոհութեամբ պարտաւեց այդ ցոյցերն, ո-
րոնց հեղինակը անխոհեմութիւն կը գործէ-
ին՝ սկարայնելու հոգեւոր իշխանութեան ազ-

ղեցութիւնն և խանգարելու վիճակին բարե-
կարգութիւնը, թերևս անգիտակից իրենց
արարմանց հետևանքներուն, և ծանօթ պա-
տասխանատուութիւն կը հրաւիրելն իրենց
վրայ:

Ըստ որոշման Ազգ. վարչութեան խոնոն
Ժողովոյ՝ կը հաղորդեմք Ձեր Գերապատ-
ութեան իւր մանաւոր զոհութիւնն՝ այն
անձնուիրութեան և կարգապահութեան ող-
ւոյն համար, որովք համակերպել փութա-
ցիք Ազգ. վարչութեան որոշման, և ան-
երկմիտ եմք որ նեցուկ ունենալով Ձեզ միշտ
տեղույզ ազգային ժողովոց սէրն ու վստա-
հութիւնը, զորս իրաւամբ կը տածեն առ
Ձեզ, պիտի շարունակէք՝ որպէս ցարդ՝ հով-
ուել խաղաղութեամբ այս կարևոր վիճակն
և յառաջ տանիլ այն բարեկարգութիւններն,
որովք յաշնոցեաք Եզիպտոսի Առաջնորդա-
րանին երմտական խանգարեալ վիճակը բար-
եօքել, ազգային հաստատութիւնները պայծա-
ռացնել, վիճակային գործոց վարչութիւնն
ըստ տեղական հանգամանաց օրինաւոր ուղ-
ղութեան մէջ դնել, և այն կարևոր անձերն,
որք ի տես իրաց անցեալ ցաւալի վիճակին՝
մեկուսացել էին, ամփոփել ի մի, մատու-
ցանելու համար վիճակին՝ իրենց կարևոր
ծառայութիւնը:

Մաղթելով, Սրբազան Եղբայր, յԱմե-
նակալէն Աստուծոյ պարգևել Ձեզ կարողու-
թիւն և կատարեալ առողջութիւն ի ծառայել
վասն պայծառութեան Ս. Եկեղեցոյս:

Մնամք աղօթակից
ՊԱՏՐԻՍՏՈՒՔ Կ. ՊՈԼՍՈՅ
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
6 ՆՈՅՄԵՐԵՐ 1889
(Վ. Ե. Ր. Ն.)

ԹՎԹԱԿՑՈՒԹԻՒՆ

1 Յուլիս 1901 Կ. Պոլիս

Կ. Պոլիս իր առջի ոգևորութիւնը վեր-
բարձրելու վրայ է: Իսկիւրապի թրամվէյի
գծին համար հանրօգուտ շինութեանց նա-
խարարութիւնը իր պայմանագրութիւնը Բ.
Գրան մատուցած է: Այս պայմանագրութեան
համեմատ՝ թրամվէյի վիճել պիտի շինուի
Իսկիւրապի նաւամատուցչէն Պաղլար Պա-
ղիի ճամբով մինչև Կլըւլը: Գարձեալ Իւս-
կիւրապի նաւամատուցչէն թողանձըլար ու
Գայրաճա Աճալու. Հայտար փաշայի կայսարա-
նէն ալ մինչև Իսկիւրապի: Գաղա զիւղէն
մինչև Մոսա ու Գուլալը երկու գիծեր պի-
տի շինուի: Իսկիւրապէն մինչև Գուլիան-
ճուք ալ զատ գիծ մը պիտի շինուի: Վերո-
գրեալ բոլոր գիծերու շինութիւնը պար-
տաւորիչ է: Արտօնաւէյը եթէ ուղի, պիտի
կրնայ մինչև Ալէք՝ Տաղի գիծ մը երկարել,
նաև գիծեր շինել Նուհ Գուլուսայի կողմե-
րը: Ընկերութիւնը պիտի սահմանէ ու նո-
րողէ գիծերուն անցնելիք տեղերուն սակա-
յատակները՝ մասամբ:

* * *

Երկր երկուշարթի առաւօտուն Արմար
Բալէսի ընդարձակ սրահներուն մէջ տեղի
ունեցաւ մեծ շուրջ հարսանեկան հանդէսը
Միջրան Կ. Գ. Գարակէօղեանի, ընդ Օր. Իզա-
պէլլու Մանուկեանի: Օր. Մանուկեան մին է
այն գոհարներն զոր Մանուկեան շայ
գալթակաւտութիւնը զրկած էր Պոլիս, և որ
Պոլսեցիք վար դրած էին զայն:

* * *

Սասնէք կ'ընթէ նկատելով որ բարեւո-
րողմանց որոշումներ գործադրուած են և
Անաստուրի նահանգաց քննիչ մարմինը այդ
նահանգներու ամեն կողմ պայքերով բնու-
թեան գործը աւարտած է, Վայո. Իրատէ
մը հրատարակէ և աւարտած նկատել անոնց
պաշտօնը: Վայո. սոյդ հրամանը հաղորդե-
ուեցաւ ներքին ու ելևմտական նախարարու-
թիւններուն և նոյն բնիչ յանձնաժողովն:

* * *

Երէկ Կ. Պոլիս ժամանեցին 80 Իսլամ
գաղթականներ Վառնայէն և Կէ ալ Քլոս-
թիւնէն: Վերջին կրետէի ղեկաբերէն ի վեր
հագարաւոր մահմետական ընտանիքներ ևս
կրետէն գալթելու վրայ են ղէպի Անասո-
լըի եղբորները: Բնական է թէ երբ մահմետա-
կան երկիր մը բրիտանոնեց կատարութեան
մը իւրանութեանը տակ անցնի, որքան մահ-
մետականներ կան հոն, կը գաղթեն այդ
երկրէն:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Տ. Ս. Փափազեան, մի քանի օր ան-
կողնոյ ծառայել վերջ՝ ըշտական հրահան-
քի մը համեմատ, այս պահուս օդափոխու-
թեան համար Սուլէ կը գտնուի, որիկ պի-
տի աշխատակցի «Նոր-Օր»ի:

Տ. Փափազեանի անձնասիրութիւնը զրգ-
ուելու համար չէ, որ անցողաբար կը գը-
նահատենք իր ամէն տեսակ զոհողութիւն-
ները «Նոր-Օր»ը կանգուն շարժելու ան-
նուան կամքին մէջ:

Իր բացակայութիւնը, թէպէտ կարճատե-
րայց ցաւալի և չափազանցօրէն զգալի, ան-
գոմ մ'ես ցոյց կուտայ մեզ թէ՛ քանիօն
խղճալի է մեր ազգային մամուլի կացութիւ-
նը, զրեթէ առհասարակ, և որքան՝ երախ-
տագիտութեան արժանի՝ անոնք որ գիտակ-
ցօրէն ուսերնուն վրայ առած են շատ ծանր
բեռ մը, առանց նիւթական առաւելութեան
մը, լոկ հանրութեան օգտակար ըլլալու ազ-
նիւ և ազգանուէր առաջադրութեամբ, և Աստ-
ուած գիտէ որքան նախատինքներու ենթա-
կայ, մին միւսէն աւելի զոգեցիտըն ան-
խիղճ ու դատապարտելի:

Եւ անդին ընթերցողներու մեծամասնու-
թիւն մը կայ, զրական մարդկինքն ամէնքն
այ, որ թերթ կը կարգան միայն կարգա-
պցած ըլլալու համար, լաւ քննադատել
գիտեն՝ առանց քննադատութեան չափն ու
սահմանը գիտնալու, և «բան մը չկայ» ը-
սելով թերթը մէկի կը նետեն:

Եթէ գիտնային որ այդ «բան մը չկայ»
պարունակող թերթը ահագին զոհողութիւն-
ներով և մտային թունաւորող աքնութեամբ
միայն երևան ելած է, մանաւանդ Հայ թեր-
թի մը համար՝ որ յաճախ մէկ մարդով կը
խմբագրուի . . .

«Նոր-Օր»ի ստամբայ խմբագրութիւնը
և իր գնահատելի գիտցող լրագրատէր ընթեր-
ցօրները վաղորդիւթ ապաքնութիւն և զը-
ուարթագէմ վերադարձ կը մաղթեն իրենց
սիրելի և անձուէր մէկ բարեկամին:

—Օմտութեան Տ. Մատթէոս Քիւրք-
ճեան մեզի կը գրէ թէ՛ «Որբասիրաց Ըն-
կերութեան» անուան տակ որբերու ի նպատ
հանգանակութիւնը միշտ կը շարունակուի և
թէ ջանքեր չեն խնայուիր բնաւ, զայն ա-
ւելի արգիւնաւոր ընելու համար: Անգամ մը
որ հանգանակութիւնը աւարտուած համար-
ուի՝ նուիրատուներու ցանկը պիտի զրկուի
«Նոր-Օր»ի:

Փափաքելի կը որ այլ ցանկը ունենայինք
շուտ որքան կարելի է, «Որբասիրաց Ըն-
կերութիւնը» անցեալին մէջ իր ստացած
նուիրատուութեանց ցանկի երտպական լեզ-
ուաւ հրատարակուել յետաձգած ըլլալով,
ինչ որ ինքնին փաստաբար անպատահու-
թիւն մ'է:

«Որբասիրաց Ընկերութիւնը» այս բա-
ցակի աղթով կուզէ Պրանսերէն լեզուաւ
թերթ մը հրատարակել, Ժողովալ ՏԵ ԳՕՐ-
Քլլէն զ'Արմենիէն անուամբ: Աւելի ուր-
պատակայարմար կը գտնենք սակայն, որ
այս գովելի յացման իրականացմանը հա-
մար կրկին համաձայնութիւն մը գոյացուի
միւս որբասիրաններուն հետ: Այդ ընկերու-
թիւնները կարող են դիմում մ'ընել իւրու-
պայի Հայաստէր նշանաւոր դիւանագէտ և զը-

բարձր անձնագրութիւններուն՝ մէկ մէկ յօդուած խնդիրով որբերուն ի նպաստ, կարգադրութիւն մ'ալ վիճակի Միջինարեւմտեան միաբանութեան հետ, որպէս զի «Որբունի»-ին կամ «Գեղունի»-ին նման, Թրանսքերն և Անդրեքերն խան, պատկերազարդ և գեղեցկագիտական պրակ մը տան մեզի:

Այդ պրակէն մէկ մէկ հաս ձրի զրկուէր ամբողջ նուիրատուներուն, իսկ մնացեալը՝ ծախու, կէս աս կէս շահու բաժնով վենետիկի հետ:

Հաշուեցէք արդիւնքը, առաջ բերած հասարակական տպաւորութիւնը և յաջողութիւնը՝ Սոսանի մէջ և այլուր, եթէ երբէք հանգանակութեան կրկին փորձ մ'ըլլա՞նք հոս կամ հոն:

Քաջութիւնը հոն է որ ալ շատ ցիտցրուած ու փորձուած նահապետական միջոցներուն չդիմենք, այլ հասոյթի նոր նոր աղբիւրներ ստեղծել գիտնանք՝ արդէն յոգնած ու տալով ձանձրացած Հայուն նիհար քրտակին վրայ շահարանալու համար:

Ս. Օ.

— Հաւատարմ աղբիւր էր տեղեկանանք թէ՛ ազգային վարժարանի վերաբացման հետ նոր և շատ կարեւոր փոփոխութիւն տեղի պիտի ունենան ու սուշական խումբին մէջ: Մանրամասնութիւնները զեռ մութին մէջ կը մնան:

Կը մտթմենք որ յաջորդող ուսուցչական մարմինը իր նախորդներէն աւելի բարձրագուր և երկարակեց ըլլաք, բաշ գիտնալով որ այն յարասե և անվերջանալի փոփոխութիւնները որ կըլլան ամէն տարի՝ միշտ փաստարկ ըլլալու սխտը հանգամանք ունեցած են վարժարանի յառաջդիմութեան համար: Աշակերտներ շուրջած են իրենց զոգրով քայլերուն մէջ, միշտ զուրթ՝ զօգուհներու ու չարքեղութիւնը խմբակ մը ստեղծուած է՝ այդ յեղից փոփոխութիւններէն, ճանբայ արեւուած ոգորմելի վարժապետներով, ասոնց իրաւացի կամ անիրաւ գօղհոթիւնէն՝ անմեղազրկութիւն հակակրանքով մը վարակուած է և հանրութիւնը, արդէն միշտ պատրաստ ամէն զրպարտութիւններ մարտելու, ձեռք կապուած յոռետեսութեամբ մը՝ վարժարանի յառաջդիմութեան մասին՝ որուն շենք գիտեր ինչ անուն տալ:

Ընտրել գիտնանք ընտրելէ առաջ:

— Ինչպէս կը տեսնուի այսօրուան մէկ յայտարարութեան՝ յառաջիկայ կիրակի՝ Յուլիս 28, Լաւրան մը պիտի տրուի Ընթերցատան մէջ: Կը յուսանք թէ ընթերցատը հասարակութիւնը պիտի գիտնայ իր ներկայութեամբ քաջախիղ Գործ. վարչութիւնը, որուն անշուղի բայց մեղուաջան ջանքերը ամէն զովեստէ վեր են:

— Մինչև այսօր, ծրագրուած սովորութեան մը համեմատ, տեղույս Առաջնորդարանի և վարժարանի սեփական ՈՍՄՍԻՍԻՍ-ները հասարակար «ան կոս» վարձու կը արուէին, ու այս գրութիւնէն աւելի ցնոզները կօղտուէին: Նոր կարգադրութեան մը համաձայն՝ Բարաքական Պատ. Ժողովը յանձնարարած է Մեծ. Մկրտիչ Լ. Քարանիկեանի, Վեմ. Պօղոս փաշայի ասան «վերջ»-ը որ անգամ մը Եկեղ-Էթմանի ԱՄՍԻՍԻՍ-ներուն այցելութեան ելլէ, «նազր» մը վարձէ՛ թողնալու որ և պատասխանատու, որպէս զի այսուհետև այդ կարուածները «ան տէրայ» վարձու արուին:

Վարձակալութիւնը պիտի սկսի յառաջիկայ Սեպտեմբեր ամսին սկսեալ, որ կալուածական գաշնագրութեանց սարկըջման է:

Կը յուսացուի որ այս նոր կարգադրութեամբ, մանաւանդ Առուսիի ջրամբարի շինութիւնը աւարտելէ վերջ, այդ ԱՄՍԻՍԻՍ-ներուն արդիւնքը՝ ամէն տարի՝ հազարէն մինչև 1,500 ոսկի աւելի ըլլալ, բարգաւաճմամբ անցեալ տարիներու եկամուտին:

Յուսայի չէ՛ որ միայն այսօր տեղի կունենայ այդ կարգադրութիւնը. պէտք էր տարիներ առաջ ստուգանալու և դորձագրուած ըլլալ ան, բանի որ աս այ վաճառականական «սփէքիւրատիւն» մ'ըսել է:

ԼՍԱՐԱՆ-ԲՏՕՒՆՅԱՏՈՒՆ

Գործ. վարչութիւնն պատիւ տնի ծանուցանել Արդյոյ հասարակութեան թէ՛ առաջիկայ Յուլիս 28ի կիրակի օր՝ առաւօտեան ժամը 10ին, Ընկերութիւնն իր անդրարանիկ Լաւրան ը պիտի տայ Ծրէքներու ձրի վարժարանին կից Ընթերցատան մէջ:

Պիտի ատենախօսուի.

Տեալք Յովհաննէս Սէթեան և Ալուսէն Չարեհեան:

Երկուսն կը թմայէր ազգայիններ կը հրաւիրուին իրենց ներկայութեամբ պատուել սոյն հանդէսը:

Լաւրանական բունախօսութեանց շարքը հեռուէտէ յաճարապէս ու պարբերաբար կանոնաւորուած գարձրներու ջերմ փոփոքին մէջ, Ընկերութիւնն յառաջիկային համար խօսելու կը հրաւիրէ ամէն կարող աղբալիներ ու կը խնդրէ որ իրենց պատրաստականութիւնը կանխապէս հաղորդուի Գործ. վարչութեան:

Ատենախօսութիւնները դրաւ որ ըլլալու են:

Գործ. վարչութեան

Ատենադպիր Ա. ՉԱՐԵՀԵԱՆ Ատենապետ Ս. ՕՏԱՊՈՇԵԱՆ Գահիրէ 19 Յուլիս 1901

Յ. Գ. Ընկերութեան վերաբերեալ լրջութեամբ թիւնները ուղղել հնարակալ հասցէով:

Société armenienne «Salle de lecture» Boite Postale N 244 Caire

ԽԱՐՈՒԻԼ ԿՈՒՉԵՆ

Ամերիկայի «Չայն Հայրենեաց»-ը մէջ կը կարդանք հետեւեալ հետաքրքրական յօդուածը՝ զոր արատապէս տւելը չենք համարել, և որուն պարունակութիւնը կը յանձնարարենք մեր խառնակութեան բանջարակեաց ու մտաւեաց՝ Եւրոպայականներու ուսումնասիրութեանը:

Չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար հոգեբանները՝ հարտանալու, գեղեցիկ կրկնալու և սիրուելու փափաքներու ըզմ չեն դասեր նաև խաբուելու փափաքը, անխաբի սուտերու լսելու և հաւատալու հօր բաղձանքը: Մի բանի օր հետեւեցէ տեղական մամուլին մանրալորբերուն և կը տեսնուի թէ նոյն իսկ Ամերիկայի մէջ՝ ուր դպրոցներ ու դրատուններ, զրբեր ու լրագրեր երկիրը ծածկելու ատտիճան բազմացեր են, ի՞նչու աւանդ օր Մէլքնէն մինչև Քալիֆօրնիա նորաւոր յիմարութիւններ կը ծին ու կը ծագան՝ միջոնաւոր մարդոց բացբերան քսակներուն և արամար ուղեգններուն շնորհիւ: Այն ատեն թեքու ալ չմեղադրէ Հայ ժողովուրդը, երբ իր մէկ անշուս մասը կը խաբուի հրապարակի մեծախօս պարուններէն:

Եւրոպի չանցնիր որ Միացեալ Նահանգաց մէկ կամ միւս կողմը գտտարանին չընդհանրանայ ուրբեգական դաս մը, միշտ նոյն պատմութեամբ՝ հիւսնդի մը ազգականները, շատ անգամ ծնողքը, փոխանակ բժշկի զիմելու կը ջանան աղօթքի ուժով յայթիջ հիւանդութեան միբրոպին. բարեպաշտութեան դրախտ զոհը կը մեծնի անոնց բժշկական խնամքի. ու ցաւային այն

որ նահանգաց օրէնքները զեռ բաւական խիստ արամադրութիւններ չունին այս կարգի ազուշ մարգապարաններ պտտելու համար:

Միսին էտի անուն պատու մը, Գրիտանուէրան գիտութիւն կոչուած ազանդի մը հիմնադիրը, նոր աւետարանի մը հեղինակն ու մարգարէն էին, կը սնդէ թէ հիւանդութիւն և ցաւ երբէք գոյութիւն չունին, թէ մարդոց երկակայութիւնը միայն կ'ստեղծէ մարմնական ցար: Եթէ հոգով բարձրանաս, կուզայ աստիճան մը որ այլ ևս յաղթելով մարմնից ազատ կըլլաս ամէն տեսակ ցաւ, եթէ նոյն իսկ թեղ կտրեն բան մը չես ըզգար: Այս բանագոյշանքին կը հետեւին կրթուած մարդիկ ու կիներ, բարձր զրգրոցներու շրջանաւարտներ, նոյն իսկ հեղինակներ ու խմբագիրներ, գաստարներ ու փաստարաններ: Այս խեղագրները բուժելու ամենէն գործնական եղանակը պիտի ըլլար ամենուն կանակին փաստար ծեծ մը բաշել, սրդէն զի փորձով տեսնին թէ ցաւը կըզգան, թէ բրիտանուէրան գիտութիւնը որ աստիճան կը զօրէ խաբազանի հարուածի դէմ:

Երգալոյն մէջ կը ծագի Տօնի կոչուած ուրիշ խեղագր մը: Միտի եկեղեցի կոչուած հաստատութեան մը հիմնադիրն որ գլխաւոր—մար մը կ'ըսէ թէ ամէն հիւանդութիւն վե՛ն կուզայ, թէ Գրիտանուէրան կրնայ բժշկել ցաւը կ'ու մեքել իր հին մեծ թշնամիին դէմ: Բայց բանի որ Գրիտանուէրան չէ, իր մարգարէն կրնայ աղօթելով նոյն հրաշքը գործել, և կատարած բժշկութեանց ոչ հաշիւը և ոչ ալ համարը: Գոցելու չ բժշկական վարժարանները, գիտական աշխատանքները, ըմբիական դատարանները, զեղարանները. ինչ հարկ տքնելու, փորձեր կատարելու, միբրոպներ գտնելու, բանի որ ամէն բան կարելի է ընել մարգարէի մէկ աղօթքով: Մասնաւոր յաղթող այս պատուին, բժիշկներու ուստեալ թըշնամին նոյնքան կատարի խաչակրութիւն մը կը բարոզէ նաև խոզու մեծ, ծխախոտի, ստարէի և ոգելից բուժեցեաց դէմ: Ով որ իր շրթները պղծէ այդ գարշելի առարկաներու հպումով գեհնի կրակին պիտի դատապարտուի:

Սակայն այս նորութիւն չէ. սոցոթի սօրտորը անակնկալ մը պատրաստել էր Յունիս Չին ունկնդիր մեծ բազմութեան մը համար, որոց առջև ըլծօրն յայտարարեց թէ ինք Եղիա մարգարէն է, ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ ալ, թէև կրկին աշխարհ եկած Եղիա մ'էր, սակայն ինք լուր չունէր մինչև որ իրեն չիմացուցին: Ես ալ, շարունակեց Ամերիկայի Եղիան, չորս տարի է որ կը տարակուսուի սակայն հիմա հոգին յայտնեց ճշմարտութիւնը:

Նոր Եղիան հրամայեց որ ժողովուրդը սաստիորդ վճարէ, նոր քաղաք մը հիմնէ, կրծական պանթաներով, գործարաններով կ'ս. բոլորը կապուած իր եկեղեցիին ու մանաւանդ իր հրամաններուն:

Յունիս Չին մարգարէին ներկայացան իր եկեղեցոյ գլխաւոր պաշտօնեաները 254 հոգի, վերապետներ, աւետարանիչներ, սարկապետներ ևն. հոն կրկին յայտնեց ինքզինք Եղիան իրբև Մեծ վերանորոգիչը, Նոր Ուտի կարապետը կայն: Ներկայից բոլորը ըզուսնեցին զինքը ի բաց առեալ երկու ճարտիներ, երկու խիօք արևըցիներ: Թէև, կըսէ թեքմ մը աւելի հաւանական է որ մարգարէն Բագաամի իշուն յաջորդը ըլլայ, փոխանակ Եղիային, սակայն ով կըրնայ արգիւել մէկը հաւատալ:

Հարկ չկայ հոս յիշել Մորմանները, վեր-

ջին օրերու սուրբերը, որ եռանդով ու յաշտութեամբ կը շարունակեն իրենց ազուշ փրփախանասան նայն իսկ արևելեան նահանգներու գարգացած քաղաքները բաւական է որ մէկը բարձրձայն քարոզէ նոր զրութիւն մը, զիտ մը, գաւառներ մը և ամենէն անդնական, ծիծաղելի և սխմար զազափար իր ետէն պիտի բաշէ բողմութիւ հաւատացողներ: Ընթմիս իրբև ազգայոց բաւական է յիշել թէ Մեքիկայի մէջ ինչ մեծ թուով կեզմ բժիշկներ, շարլաթաններ, հարցոյիներ բարգաւաճաներ, հոգեբնու միջնորդներ կան խաբելով կապրին և աղբելով կը խաբեն:

ՎԱՀՐԱՄ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ասկէ առաջ անգլիական թերթ մը Տիկին Գրիտանուէրան Տէվէթի լուսանկարը հանած էր, անկրաւօրէն յարելով թէ՛ Տիկին Տէվէթի կը գանուի Օհաննէսպետրիկ մէջ բրիտանական պաշտօնութեան ասկէ Տիկին Տէվէթ ազգուպար կը բողբէ այս յիբրանքին գէմ. կըսէ թէ իր կամբով չէ որ Օհաննէսպետրիկ կը գանուի, հապա սովաներով իր սղաքներու թափառական պատե՛կ վերջ՝ անգլիացիներուն ձեռքը ինկած ու Օհաննէսպետրիկ բերուած էր, ուր տեղ պատշաճաւոր ընդունելութիւն չէր գտեր, զրկանքներու հանդիպած է, և թէ ինչ օղնութիւն որ կապուէ՛ կապուէ՛ միայն մարդ սուէր աշխարհէն, անգլիացիներէն ոչինչ:

Անգլիոյ մէջ կրծաւորներու հանրապիւն կարծիքը՝ որ մինչ այսօր նպաստաւոր էր Զնայէլլըի քաղաքականութեան, սկսած է հիմա հակառակել այս վերջնայն:

Շատ մը հանրածանօթ եկեղեցականներ՝ ազգու ու կծ ու բողբագրբութով, մամուլին մէջ կամ այլապէս կը գատապարտեն պատերազմը, որ այնքան սուղի նատու. Անգլոյ, բարոյապէս թէ նի թապէս:

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

Ս. Սուկ. — Չեր զրկածը յաջորդ անգամ տեղի անձկութեան պատճառու:

Մ. Բ. Օտտոման — Չեր ուզած Անգլոյ. բաւարարը պիտի դ'կ'եր՝ եթէ զբաւուելու ըլլայ հոս տեղ:

Ա. Օ. Համալուր. — Չեր առաջակին գոհացում տուէ տամբ՝ պիտի ուզինք քիշ մը աւելի լարվ ճանթթի իրաներ ունենալ, ձեզի ուզուած նամակի պտուղնութիւնը անբուական ու տեղ տեղ հոփառակ ըլլալով: Չր խաբուիր: Մարդիկներ կան, ազան ու անհարկեր՝ որ երբ օտար կ'ըլլի մը գաղթեն՝ կուզեն աւելի օրէն սակի զիւղել, և երբ չեն յաջողու, ամէն լուս իրենց շարքը սե կը տեսնեն:

Մ. Այլ քսանդրիա. — Շեր հոփառութիւն ձեր համակիր պապաւորներուն համար. գրու սիրայ սկուածը բայ է սակ՝ կարող գրիչներու տուած: «Նոր-Օր» ոյլիս տարեկան բաժնեղին շնորհակեր:

Կ. Գահիրէ. — Կը ցաւեր որ ձեր գրութիւնը չենք կրնար հրատարակել. թեքթեր շատ կարգապէս, ուշ ուշով կարգաւոր պայմանաւ:

Տպաւ. «Միւրիս Ե» — Թ. Ա. Փափագանի